ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լուսինե Ազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսինե Ազարյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 5-րդ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նախագահի թեկնածու, նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս:Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Անի Շահինյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

Որոշեցին.-5-րդ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1.Անի Շահինյան /նախագահ/
2.Մեղա Եղիազարյան /անդամ/
3.Արմինե Սարգսյան /անդամ/
4.Մարգարիտա Գրեյան /անդամ/
5.Ռոզա Խաչատրյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսինե Ազարյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Անի Շահինյան
Քարտուղար՝ Արմինե Սարգսյան